

ՄԱՏԵՎՈՅՐԸԿԱՆ

(ԽԵՒ) ՅԱՎՀԱՇԱԽԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ

Ա. ՎԻՊԵՐԳՆԵՐ

= 1 =

ՏԱՂ ՔԱԶԻ ԼԻՊԱՐՏԻՆ

Ա.

Ե Աստուծոյ անունն օրհնեալ, որ անըսկիզբն եւ անվախնան,
Որ ուժ երես քաջ Լիպարտին, եւ զօրացոյց իւր սուրբ ծառայն:

Բ.

Ի սուրբ Մարգիս քաջն ի նըման, ի սուրբ Թորոս, ի սուրբ Վարդան,
Քան ըզմուշեղ այլ խիստ յաղթող. քան ըզծրդատ Հայոց արբայն:

Գ.

Յորժամ հեծնուր զիւր ծին վազան, ի ծեռն առնոյր զըռում ճօնան,
Սասանէր ազգըն Թուրբիմանց, դողայր ամէն Բարելաստան:

Դ.

Պատերազմին չըկայր խափան, ամէն տարի տասն եւ քըսան,
Մինն ըզթումանըն հալածէր, արիւն հանէր զէտ զետ Զիհան:

Ե.

Ապա այլազն այն անհաւան . . .
Օձ եւ կարին ի յիժ նըման.

Զ.

Զերթ քացխով տիկ չարեօք լըցան, ժողովը առին ւի Սիս եկան,
Մանչակ անուն չարեաց մառան, մօտ ի քաղաքն եկան հասան:

Նախօք. — Բնազիր կ = Սիսուան, Ա-
լիշան, 1885, էջ 226: — Հմմ. Տ = կ.
Կոստանեանց, Յոզէ. Թլկուրանցի, 1892,
էջ 52, Սիսուանէն առնուած: — Հ = Հա-
յապատում, Ալիշան, 1901, էջ 539: —
Յուշ, = Յուշիկը, Ալիշան, Բ. էջ 511, 3
տաւն միայն: — Ե = Հ. Նիրուէս Ակինեան,
Հանդէս Ամաօրեայ, 1933, էջ 135:
Ա. 1. — Ե Աստուծոյ, Տ Ն Յուշ, ՅԱԽ-
տուծոյ, կ: օրհնած, Յուշ, : — 2. — Որ
ուժ երես յաջ Լիպարտին, Յուշ. Ար ետուր
ուժ Լիպարտին, կ:
Բ. 1. — Ի սուրբ Մարգիս քաջին նման,
Յուշ. Զերթ . . . կ: — 2. — Քան ըզմուշեղ

այլ խիս յաղրոյ, Յուշ, : Քան ըզմուշեղն
յաղթող եղեալ, կ:

Գ. 2. — Օտրանց, կ. (հզիպտական)
Հ. Թուրբմանց, Ն. Օտարպաստան, կ.
Տաճկհաստան, Հ. Թուրբմանաստան, Ն. : —
Գ. Չունի, Յուշ . . .

Գ. 1. — Պատերազմիլ եկիր հափայն,
Յուշ, : — 2. — Ինքն ըզթուման հալածա-
նէր, արիւն հաներ զետեր Զիհան, Յուշ.
Ինքն ըզթուրբմանըն . . . ն:

Ե. — Այս երկու թերի տողերը առինք
Հայապատումէն, Սիսուանի մէջ կախման
կէտեր միայն կան:

Զ. Մառան — աման, Հ:

Է.

Վաթսուն հազար մարդ միաբան, զրբէնն հագան և ի ծին հեծան, Զեռուին առին զըռում ճօնան, թուր և ասպար, ու կանգնեցան:

Ը.

Վաթսուն հազար այլազք ելան, ձայն ծըգեցին ու կատղեցան, Հարին ըզփող պատերազմին, ըզպուկն ու զնամիիրն ըզգաւհարկան:

Թ.

Այն անօրէն չար կենդանիքն, որ են նորա այլազական, Եւ ի յահէն բազ Լիպարտին զինչ զուռ դողան, առաջ չի զան:

Ժ. Ա.

Յայնժամ առէ սուրբ թագաւորն, բազ Լիպարիտ, մեծ զօրական, Հնձելըս քեզ համար եկան, մինչ յայս տեղիս ուր կանգնեցան:

Ժ. Ա. Հ.

Վաթսուն հազար մարդ կոտրեցիր, ու զՄանչակին զոված տրդան, Առիր ըզթախտըն Սուլթանայ, բերիր ծիան ու շատ թուրբման:

Ժ. Ա. Հ. Հ.

Քաղցրիկ ետուր պատասխանի, թէ, ես՝ բաղքիս չարին փոխան, Բայց չէ պատնի զրուց առնել, թէպէտ հասաւ ինծ օր մահուան:

Ժ. Ա. Հ. Հ. Հ.

Եղ եւ թամրեաց զիւր ծին վազան, հազաւ զրէն և ի վերայ նօշան, Ի զլուխն եղիր յաղթող վանան, ի ծեռն էառ զըռում ճօնան:

Ժ. Ա. Հ. Հ. Հ. Հ.

Երկըրպագեաց սուրբ աթոռոյն, եւ ծունք եղիր ամէն խորան, Փառաւորեաց զերրորդութիւն, զովեաց զիշխանսըն միաբան:

Ժ. Ա. Հ. Հ. Հ. Հ. Հ.

Հառնեաց, զորդեակըն համբուրեաց, հանց որ զնեծելն ի լաց ենան, Ասաց. Օրդեակ իմ Յովհաննէս, Վասիլ, եղբայր իմ սիրական,

Ժ. Ա. Հ. Հ. Հ. Հ. Հ.

Փառօք տիկին դու Մանանայ, իշխանունի արեւնըման, Հայեաց պատկերս ի մանկութեան, որ տի մտնում ի հող տապան:

Ժ. Ա. Հ. Հ. Հ. Հ. Հ. Հ.

Քաջ Լիպարիտ ասաց ցարքայն. Հայոց թագւոր ազնուական, Հաստատ և ամուր պահէ զկարմունքն, որ ես մտնում ի մէջն ու զամ:

Բ. 1. — Ա. Հ. Ա. Պ. Ք. — օարանց, Կ. (Պօ-
րաց) Հ. Թուրքմանի, Ե.
Բ. 1. — Օտարական, Կ. այլանըման,
Հ. Թուրքմանական, Ե.

Ժ. Ա. 1. — Ա. Հ. Ա. Պ. Ք. զո-

ված տղան ասիր, 2. — զթախտն թուրքա-
նայ ք բերիր, ձիանուն չատ թախտան ք,
Կ. — Եալունարեցինք Ակինեանի բարեփո-
խած ձեւը:

Ճ.Բ.:

Յիշեաց զՔրիստոս ահնդանայն, կտրեց և անցաւ առի ծնըման, Զհնձելն արար փախըստական, և ի հնտն երթայր ընծանըման:

Ժ.Թ.:

Լաշք արաւ դիզան դիզան, հանց որ արիւն գետեր ելան, Նա թազաւորըն չարացաւ, զհնձելն առին և ի յնտ դարձան:

Խ.:

Այլազ հնձելն յառաջ եկին, զկարմունմն առին ու կանզնեցան, Երբ Լիպարիտն ի յնտ դարձաւ, նա չար հնձելն ի դէմ ելան:

Խ.Ա.:

Ըռումք դըրին ամէն դիմաց, շատ խոցեցին զյաղթող վըկայն, Հայէր ողորմ յաջ եւ ի ծախս, զոչ որ գրտաւ իւր օգնական:

Խ.Բ.:

Գազանաղէմ անօրէնին՝ Սրբոյն արեան ժարաւէին, զիւր սուրբ մարմինն ի հոն թողին, զզլուխըն առին ի հնտ տարին:

Խ.Վ.:

Երբոր հնձելըն ի յնտ գնացին, և ապա Սրսցիրն ի դուրս ելան, Կըրկին առին և ի Սիս եկան, բաղրին կըրակ զարկին և ելան:

Խ.Շ.:

Շատ դարպասնին աւեր ածին, և եկեղեցիքըն զանազան, Երիցկանայր զերի տարան, սարկաւագունքըն միաբան:

Խ.Վ.:

Ճառագայթեց լոյսն ի վերան, եւ սուրբ մարմնոյն ի հանզըստեան, Քաջ Լիպարիտ, ու Սիր Յոհան, ըրիստոնէից համար մեռան:

Խ.Հ.:

Յորտեղ նատին հաց և ի սեղան, ժողովք բազում եւ շատ իշխան, Ցիշն ըզնա սուրբ բահանայքն, Տէրն ողորմի, ասին նըմա:

Խ.Հ.:

Եէվ Յովանէս Թուլկուրանցին կարճ եւ ողորմ ասաց զայս բան, Դուր յիշեցէք զինքն հանապազ, յառակ ասէք ի մի բերան:

Ժ.Բ. 1. — Լաշք, լաշկ արաւ, կ. լաշ-
կուրն արար, ն:

ի. 1. — Այլազ — օտրանց, կ. թուր-
քաց, Հնե:

ի. 2. — Գիշացն, ն: անօրէնին,
ն. անօրինին, էջմիածնի թ. 515 ձեռագրէն,
ըստ Ալինեանի:

ի. 3. — յեկեղեցեացըն, կ. յեկե-
ղեցիքն, էջմ., ւելիդիցին, ն: — 2. — ե-

րէց կանանց, Հ. երէցեկնին, ն:
իե. 2. — ուսիր, կ. Հ. ու Սիր, ն:

նահատակառազ Սիր Յոհանը Լիպարիտ որ-
դին չէ, ինչպէս կը կարծեն Հ. ն. Սկին-

եան և ուրիշներ: Լիպարիտ զաւակը շատ
փաքրիկ էք այն տառն:

ի. 2. — Տէրն — առն, կ. Հ. Տիր, ն:
ի. 2. — յառակ — թերեւս պիտի ըւ-

լոր՝ յերազ:

= 2 =

ՏԱՂ ՍՐԲՈՅՆ ԱԼԷՔՍԻԱՆՈՍԻ

Ա.

Աստուած զթած եւ մարդասէր յերագ լոէ իւր ծառային,
ով հաւատով պարզեւը խնդրէ . փութով առնու զիւր խնդրելին:

Բ.

Թէ միտ դնէք զվարքն ասեմ զԱլէքսանոս նզնաւորին ,
Տէրքն տայ խաղաղութիւն , եւ ինձ ի ծայր ելեալ բանին :

Գ.

Աստուածասէր իշխան մի կայր եփրիանոս անուն կոչիւր ,
ի մեծանիստ բաղաքն Ստամբոլ որբ զթագաւորքն օծանէին :

Դ.

Ինքն եւ իւր կինն էին բարի , պահող որբոց պատուիրանի ,
Դարպաս ուն(է)ին ոսկով ծեփած , շատ գանձ ունին որդի չունին :

Ե.

Կինն փափաք ունէր որդոյ , յերակ ի լաց պահ(ու)էր զաչուին ,
այնու շրջէր ի վանորայս , լալով ասէք զգանգատ սըրտին :

Զ.

Եկեղեցեաց կու տայր պարզեւը , ոսկի ծածկոց սուրբ սեղանին ,
բահանայիցըն տայր դեկան , ողորմութիւն դառն աղքատին :

Է.

Զորժամ մեծ(ա)ցաւ եւ զարգացաւ , բարով ելից զեօթն տարին ,
երես նոցա զաւակ աւրհնեալ , զԱլէքսանոս անուն բարին :

Ը.

Ասին ուսոյ Տէր զմեր զորդին , զուսումըն սուրբ աստուածային :
Յորժամ ուսաւ եւ կատարեաց , եղեւ ծանաւթ Աւետարանին :

Թ.

Ոչ պարապ էր նա աղօթից , եւ ոչ խնայէր նա զիւր մարմին ,
Սաղմոսարանին մեկնիչ ուզեց , զայն այլ փութով զրել տվին :

Ժ.Ա.

Նա հայրն եւ մայրըն կամեցան , զԱլէքսանոսըն թէ կարզին ,
զնացին առ այլ հզօր իշխան , զայն իշխանի դուստրն ուզեցին :

Նանօր. — Սոյն տաղը առած ենք Ս. է. 1636-1642 թուականներուն։ Բատ մեր Աթոռոյո թիւ 1485 նոտրադիր փոքրագիր ձեռագրին վերհագիրն է . «Տաղս ասացեալ ժաղովածոյէն , (էջ 437-445) որ օրինակուած ի վերայ Սրբոյն Ալէքսանոսի» :

ԺԲ.

Նորա ուրախ սրտի մոռք, սուրբ եւ տալիքըն կտրեցին,
ասին կու տամբ զմեր Մարգարիտն, Ալէքսանոս նող պատկերին:

ԺԳ.

Ապա դարձեալ պատրաստեցին, ըշհարսանեաց խորհուրդն արին,
զծին եւ զջորին զարդար[եց]ին, զեզն եւ զոչխարսըն զենեցին:

ԺԸ.

Շատ բահանայք և իշխանըն առին, զԱլէքսանոսն ի մօտ զնացին,
ասին հրամայէ պարոն որդի մուտ ի յօրէնս նախաստեղծին:

ԺՎ.

Լալով մտաւ յեկեղեցին, յերկիր պագեաց սուրբ սեղանին,
թէ Տէր փրկեա զիս ի հնարից որ ես յաղթնմ զիմ թշնամին:

ԺԶ.

Ապա եկաւ ի դուրս կրկին, զլուխ եղիր ժողովրդին,
թէ խոստացայ զիս Աստուծոյ, ինձ չէ կարիք կին ամուսին:

ԺԷ.

Շատ ամօթով բաներ ասին, բռնադատեալ ձին հեծուցին
տարին ի դուռըն ծընօղին, ծնօղըն ի դէմ ելաւ զաւկին:

ԺԸ.

Լալով զորդին համբուրեցին, հանց որ ժողովըն ի լաց հանին,
ապա բերին առ հարսն ածին, փառօք մտան յեկեղեցին:

ԺԹ.

Երկիր պագէր սուրբ սեղանին, փառաւորէր զշայր եւ զնրդին,
լալով անկաւ ի յոտս նոցին, եւ աղայէր զիրիցանին:

Ի.

Մի գնէր պսակ անցաւորիդ, ինձ չէ կարիք կին ամուսին,
կարմիրն արիւն է խիստ զիտեմ, փափուկն երթայ ի կեր հողին:

ԻԱ.

Սուրբ բահանայքըն զարմացան, պսակ դրին զինքն աւրենեցին,
յորժամ զաէրն կատարեցին, տարան ոսկի սեննակն ածին:

ԻԲ.

Զդուռն եւ զդուրքն փակեցին, անհոգացան եւ ննցեցին,
կինն խաղայր եւ զիրկն ածէր, զարթուցանէր զանմեղ հոգին:

ԻԳ.

Նա կուսութեան պսակ ունէր, մտիկ-չդնէր ամենեւին,
ասաց թէ կին իմ Մարգարիտ, առ բեզ նշան զիմ մատանին,

ԻԴ.

Մինչ ես ի դուրս ելնեմ եւ զամ: Ալ յետ չդարձաւ երանելին.
ոսկի և արծաթն ի կեր ժանկին, նախու բիմհայն ի կեր ցեցին:

1.1.

Տեսաւ զազքատ մի երանելին, երես բեհեզդն եւ ծիրանին,
ինքն հազաւ զբուրծն աղքատին, կամէր գնալ յիզեր ծովին:

1.2.

Յորժամ չդարձաւ երանելին, լայր եւ ծայնէր մօրն Աննային.
թէ ելէր տեսէր զծեր որդին, զիմ աչաց լոյսն եւ զծեր հողին:

1.3.

Լալով ի դուրսն վազեցին, զլլէքսանոսն փնդոէին,
հայրըն եւ մայրն եւ կին նորին, բոլոր բաղաքն ի յիտ նոցին:

1.4.

Յորժամ (որ) չգտին այնչափ լացին, որ արիւն արտասուեցին,
Ալէքսանոս նաւեց անցաւ, Ախնէական Քորեր լերին:

1.5.

Քառասուն տարի պահօք աղօթք արար յանապատի,
ապա եկաւ յերուսաղէմ, երկիր պազեաց զերեզմանին:

1.6.

Եկաւ հասաւ յմերհայ քաղաք, շատ աղօթեաց երանելին,
ապա վիշապն անզընդային, դեւքն բնական չար թշնամին:

1.7.

Զգեցին միտք զութ ծնօղին, հոն որ աղքատքըն կենային,
կամէր գնալ յեզեր ծովին, նաւեց անցաւ յիւր յաշխարհին:

1.8.

Գնաց ի դուռըն ծնօղին, հոն որ աղքատքըն կենային,
երկիր պազեաց հօրն իշխանին, տեսաւ զմայրն եւ զկին բարին:

1.9.

Լայր եւ ասէր երանելին, հօրէն խնդրէր ողորմութիւն,
տեղի տվէր ի ծեր դրան, վանց կարօտուն Ալէքսանոսին:

1.10.

Մայրն հառաջէր և ասէր լալով. աչքըն և ունքըն է իմ տղին,
տվէր իւրեան տեղ հանգստեան, կատարեցէր զիւր խնդրելին:

1.11.

Զինչ մայրն եւ կինն ի դուրս գացին, լկտի աղջկունքն եւ ծառայնին,
ի դուրս գային մազն բռնէին, երես ի բարշ զնա տանէին:

1.12.

Մոխրաթաւալ զինքն առնէին, հանց որ լալով ասէր ծնօղին,
թէ ազատեա զիս սուրբ տիկին, վասն կարօտուն Ալէքսանոսին:

1.13.

Տէրըն տայ ծեզ խաղաղութիւն, եւ կատարէ վերջն ի բարին.
զտիւ եւ զիշեր աղօթք անէր, ոչ պարապէր ամննեւին:

Լ. Ը.

Ապա հասեալ որ վաղճանին, կամաւ աղքատ ճգնաւորին,
էառ թանաք եւ թուղթ երկայն, ի ներս զրեաց զգանկատ սըրտին:

Լ. Ը.

Վաղճանեցաւ երանելին, անուշահոտ խունկ բուրեցին,
հանց որ յուսով ի տես գնացին, զրոլոր բաղաքն ի հետ նորին:

Լ. Ը.

Հրեշտակը առին զնորա հոգին, փառօք յերկինըս տանէին,
խառնել ի գունդ հրաբուն սեռին, ի յերկնային յառագաստին:

Լ. Ը.

Ապա ժողովքն որ հոն կային, զնացին զհայրըն ծայնեցին,
ասեն արի տես զայն աղքատն, որ կայ մնոեալ թուղթ ի ծեռին:

Լ. Ը.

Եկաւ առաւ զթուղթն ի ծեռին, կարդաց տեսաւ բան առաջին.
Ալէքսանոսն եմ ծեր որդին, լալով ողջոյն իմ ծնողին:

Լ. Ը.

Մաղմոսարանըս նշան, առ Մարգարիտ զիմ մատանին,
բայց մայր լաչ զիմ գանկատնին, զինչ քո ծառայրդ հետ ինձ արին:

Լ. Ը.

Կին Մարգարիտ դու վկայես, որ երեսովս ի քարշ տանին:
Հայրըն անկաւ խելքըն գնաց, հանց որ նորով կանգնեցուցին:

Լ. Ը.

Մայրըն եղեւ զինչ մաղա[ս]կաթ, մուտ չզտաւ առ զիւր որդին,
դարձաւ ցանեց կարմիր դեկան, ապա թէ զմուտքըն հորդեցին:

Լ. Ը.

Գնաց անկաւ ի վերայ տղին, լայր և հառաչէր ողորմագին,
Ալէքսանոս մօրըս քո վայ, հազար եղուկ մեծ իշխանին:

Լ. Ը.

Քանի քո խոցդ է ահազին, անչափ հառաչէր Մարգարտին,
որ ոչ թափի ի խոցերուն, մինչեւ հասնի օրն ի մահուն:

Լ. Ը.

Առեալ տարան անփոփեցին, եկեղեցի սուրբ շինեցին,
Ալէքսանոս անուանեցին, շատոց առնէր բժշկութիւն:

Լ. Ը.

Եեւ(*) Յովանէս Թուլկուրանցի, զրեցի զվարս ճգնաւորին,
արքայութեան ճանապարհն է այս, ով չզիտէ թող ուսանին:

Ն. ԵՊՈ. ՇԱՎԱԿԱՆ

(1)

(*) Եեւ՝ Վենետիկեան երկու տաղարաններուն համաձայն. Հմմ. Բաղմավէալ, 1905,